ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՍՊԱՍՄԱՆՑ ԳԻՇԵՐ

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Գնանք, ուրեմն, իմ մայր ժողովուրդ, ահա քո մայր Արաքսն էլ գնում է ծովերը՝ քո խաղաղատենչ եղբայրութիւնը խառնելու աշխարհի ծովերին։ Արթնացիր՝ գնանք, քանի ներկայիդ գինեվարդ բաժակում մոռացած կը լինես անցեալիդ վշտերը, որոնք թրերի հետքեր են, ինչպէս ոսկէ ձկան մէջքը փլերով՝ այնպէս էլ քո կուրծքը վահանուած է սպիներով, բա՛ց կուրծքդ, ոգիացած եկ ինձ հետ, գնանք ցոյց տալու այն, ինչ որ չես ուզում կրկնուի։ Դո՛ւ, որ յիրաւի ծովից մի բուռ ես մնացել, գնանք սրերը պատեան դնել տալու եւ քո յոյսերի գութանախոփերը սրելու աշխարհի բոլոր դաշտերի վրա ... Հիշի՛ր, իմ ժողովուրդ, որ մեղքի մի կաթիլ էլ չունէիր քո եօթը միլիոն մեռ ցուած զաւակներիդ արեան ծովում, որով անապատի աւազներն յագեցան, բայց ոսոխը՝ ո՛չ ...

2. Եւ անցանք ապա Մասիսի ձորով,
Որ մեզ էր կանչում մութ քարայրներով։
Ու երբ լուսնի հետ մի քարայր մտանք,
Մի հոյլ լուսնադէմ կոյսերի գտանք՝
Լուսնից էլ լուսնեակ։

Հայելու առաջ
Իրար դէմք էին եղծում ինքնատանջ,
Իրար դէմք էին՝ ցաւով էլ խարում
(Աստըծոյ շընորհն էին խաթարում ...)
Ինչպէս մարմարի ողորկի եղծես,
Փշոտում էին վարդերն այտերի,
Որ մրցողն էին անփուշ վարդերի,
Երկար թարթիչներն անաստուած խանձում
Վարդ շուրթերին էլ վէրք էին բացում.
Արեան ցողերը շիկնում էին խեղճ
Եղծուն այտերի փոսիկների մէջ։

Բայց ինչպէ՞ս փլեն կամարն յօնքերի,
Որ պիղծ հարեմին չընկնէին գերի ...
Խաչը ... բայց խալը ինչպէ՞ս պոկոտեն,
Որ տգեղանան, որ աչքից փրկուեն,
Սուտակ, ադամանդ ատամներն անգամ
Փշրողներ եղան՝ որ տգեղանան։

digitised by A.R.A.R.@

Ճերմակ ճակատի մարմարն էլ քերում,
Պալարներ էին դէմքերին բերում,
Որ ձեռ չըգըցեն փաշեքն արնածոր՝
Չպղծեն ... ապա չճամբեն Դեր-Զոր ...

Եվ ծպտում էին հայուհիք իմ պերճ,
Թաքնւում էին քարայրների մէջ,
Մութ վիհերի մէջ կիրճ ու քերծերի,
Աւերակներում բերդ-ամրոցների։

Յոյժ գեղեցիկն էլ յոյժ վիշտ է բերում՝

Երբ յոյժ տգեղ է դեռ մարդն աշխարհում։

«Հայոց Տանթէականը» ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@